

ԱՂՁՆԻՔ ԱՀԱՅՆՈՒՄ ԵՆՈՒՄՆԵՐԻ ԱՎԱՆԻՊԱԿԱՆ ՓՈՒՆԴԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

(XIX դ. երկրորդ կես — XX դ. սկիզբ)

Ի. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ավելի քան մեկ հարյուրամյակ է, ինչ գիտական գրականության մեջ հատուկ քննարկման առարկա են դարձել ընտանիքի պատմական ձևերի, հասարակության զարգացման տարբեր փուլերում դրանց դրսևորումների, ընտանիքի և հասարակության, ընտանիքի և անհատի փոխհարաբերությունների, ներընտանեկան փոխհարաբերությունների ու համայնման այլևայլ հարցերը: Մարքսիզմի դասականներն առանձնահատուկ ուշադրություն են դարձրել «ընտանիք» հասկացությանը, բնորոշելով այն որպես հասարակության հիմնական սոցիալական բջիջ, որպես սոցիալական այնպիսի օրգանիզմ, որի տիպը, կազմը, ողջ կենսաձևը պատմական լայն առումով միշտ համապատասխանել է նրա կենցաղավարման ընդհանուր սոցիալ-տնտեսական պայմաններին¹: Ուստի և ընտանիքի պատմական ձևերի, դրանց կառուցվածքի, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների և վարվելակերպի ուսումնասիրությունը մեծապես կարող է նպաստել հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունների բացահայտմանը:

Այս առումով հատկապես կարևոր նշանակություն ունի ընտանեկան կենցաղում տեղ գտած մի շարք սովորույթների ծագման, պատմական զարգացման ընթացքում դրանց կրած փոփոխությունների, կենցաղավարման ձևերի ու ժամանակի, ինչպես նաև գոյատևման պատճառների ու պահպանվածության աստիճանի բացահայտումը: Այս խնդիրն էլ ավելի մեծ կենսական կարևորություն է ձեռք բերում սոցիալիստական շինարարության պայմաններում, երբ դարերի խորքից եկող էթնիկ շատ ավանդույթներ կարող են նպաստել կամ խոչընդոտել ընտանիքի պատմական նոր տիպի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Ընտանիքի, որպես էթնո-սոցիալական կարևորագույն օրգանիզմի ազդարորեն ուսումնասիրումը ենթադրում է նաև ներընտանեկան կառուցվածքի, ընտանիքի անդամների միջև ավանդաբար ստեղծված փոխհարաբերությունների համակարգի գիտական քննարկում: Սովետական Հայաստանի տարբեր շրջաններում վերաբնակված աղձնիքահայերի մեջ հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերը հնարավորություն են ընձեռում ներկայացնելու հայ ժողովրդի այս հատվածի ներգերդաստանական կառուցվածքի բնորոշ գծերը²:

¹ Маркс К., Конспект книги Льюиса Г. Моргана «Древнее общество». — Маркс К., Энгельс Ф., Соч., т. 45, с. 254.

² Աղձնիքը պատմական Հայաստանի հիմնական ազգագրական մարզերից է՝ ուրույն մշակութա-կենցաղային հատկանիշներով, ուր հայ կյանքը հնագույն ժամանակներից հարատևել է

Ընտանիքի կայունության ու գոյատևման նախապայմաններից մեկը նրա ներքին կյանքի ճիշտ կազմակերպումն է, բոլոր անդամների պարտականությունների, ֆունկցիաների և իրավունքների համամասնական բաշխումը, որ անշուշտ, պայմանավորված է ընտանիքում տիրող սեփականության ձևերով, տնտեսական ու իրավական հիմքով: Սակայն հայտնի են նաև, որ որոշակի պայմանների ծնունդ հանդիսացող ներընտանեկան փոխհարաբերությունների համակարգն իր հերթին մեծապես նպաստում է տիրող տնտեսական ու սոցիալ-իրավական կացութաձևի գոյատևմանը: Հետևապես լիովին բնական է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածի աղձնիքահայ ընտանիքը շատ բաներում համատեղվում էր նահապետական գերդաստանին և անհատական փոքրը ընտանիքին ներհատուկ բնորոշ շատ գծեր. գերդաստանական հարաբերությունների ոճը և ղեկավարության որոշ խստությունները: Պահպանվում էին մեծերի նկատմամբ կնոջ շխտականությունը, քթկալակապությունը և որոշ չափով անիրավահավասարության տարրերը, կանանց սեռի առավել հնազանդությունը, աշխատանքի կոլեկտիվ կազմակերպումը և այլն: Մի երևույթ, որ դիտվել է նաև կովկասահայ իրականության մեջ³:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին աղձնիքահայ ընտանիքում տիրող ներքին կյանքը, վարքն ու բարքը դեռևս խարսխվում էին դարերի խորքից եկող նահապետական ավանդույթների վրա, որոնք էլ պայմանավորում էին ընտանիքի յուրաքանչյուր անդամի տեղն ու դերը ներընտանեկան կյանքում:

Ընտանիքի ներքին կառուցվածքում կարևորագույն օղակներից մեկը աշխատանքի բաժանումն էր, որի ավանդական կազմակերպման սկզբունքները հատկապես հստակորեն էին գործում գերդաստանում: Որոշակիորեն սահմանազատվում էին աշխատանքի բաժանման սկզբունքները. ա) աշխատանքի բաժանում ըստ սեռի, բ) աշխատանքի բաժանում ըստ տարիքի, գ) աշխատանքի բաժանում ըստ տնտեսության ճյուղերի կամ աշխատանքի բնույթի, որ բաշխվում է առաջին երկուսին համապատասխան: Ահա այս երեք նկատառումների համատեղ ու համաժամանակյա կիրառման շնորհիվ էր, որ իրականացվում էր Աղձնիքի ընտանիքի՝ որպես տնտեսական ու սոցիալական օրգանիզմի, արտադրության ու վերարտադրության պրոցեսը⁴:

Սեռերի միջև աշխատանքի բաժանման բնական անհրաժեշտությունը աստիճանաբար ձեռք է բերել մշակութային երևույթի արժեք, իր մեջ ներառնելով այդ երևույթի սոցիալական ու էթնիկական բոլոր կողմերը: Դա փաստորեն մանկան դաստիարակության և սոցիալիզացիայի անբաժան և կարևորագույն բաղադրամասն է: Քանի որ հայ բնակչության կյանքը հիմնականում սերտորեն կապված էր հողագործության և անասնապահության հետ,

մինչև մեծ Եղեռնի օրերը: Այդ տարածքը, որ հանդիսացել է հայ ժողովրդի կազմավորման հնագույն օջախներից մեկը, դժբախտաբար, աննշան բացառությամբ, դուրս է մնացել բանասերների և ազգագրագետների տեսադաշտից, ժամանակին շատ սակավ են գրի առնվել Աղձնիքի բնակչության անշափ հետաքրքիր ու յուրահատուկ ազգագրական երևույթները: Ցավոք, անհրաժեշտ նյութերի հայթաթումը մեծ դժվարությունների հետ է կապված, քանի որ մեծ Եղեռնից հետո բուն Աղձնիքում հայ չի մնացել, մնացածներն էլ ցրվել են ի սփյուռս աշխարհի, մասամբ միայն ապաստանելով հորհրդային Հայաստանում: Այդուհանդերձ, մենք շնացել ենք մեկ ու կես տասնամյակի ընթացքում հավաքել հնարավոր այն ամենը, ինչ կա գրավոր աղբյուրներում և հորհրդային Հայաստանում վերաբնակված աղձնիքահայերի մեջ:

³ Վարդումյան Գ. Ս., Կարապետյան Է. Ս., Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Երևան, 1963, էջ 64: Տե՛ս նաև Тер-Саркисянц А. Е., Современная семья у армян, М., «Наука», 1972, с. 71—72;

⁴ Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. 3, Երևան 1941, էջ 78—79, Карапетян Э. Т. Армянская семейная община, Ереван, 1958, с. 81—89; Варданян Л. М. Традиции мужских возрастных групп у армян (конец XIX—начало XX вв.). «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 12, Երևան, 1981, էջ 123—126: ¹

ուստի և երեխաների դաստիարակութունն էլ կապված էր ծնողների առօրյա զբաղմունքների, գործնական կյանքի հետ: Երեխաներին բազմատեսակ դժվար աշխատանքների լծելով, նրանց դաստիարակում և աստիճանաբար վարժեցնում էին տնտեսական ծանր աշխատանքների, որպեսզի հետագայում անցնեին ինքնուրույն կյանքի: Ահա թե ինչպես է ներկայացրել սասունցու մանկանը Մ. Աբեղյանը. «Երեխան մատաղ հասակից սկսած տան համար աշխատող ձևոք է, մանկութունից սովորում է շարքաշ կյանքի, թափառում է լեռների վրա և անտառների մեջ, ենթակա ցրտին ու արևին: ... Եվ մանուկն այդ կյանքի մեջ եփվում, բրտանում է և դիմացկուն դառնում»⁵: Դեռ մանկուց որոշակի տարբերակում էր մտցվում տղա և աղջիկ երեխաների աշխատանքային դաստիարակության, նրանց անելիքների, պարտականությունների միջև:

Նահապետական դարավոր ավանդույթներով առաջնորդվող հայ ընտանիքում տան հույսը, «կանգուն սյունը» և «օջախն հավերժ» պահողը համարվում էր արու զավակը: Սեփականատիրության օրենքներով տղա երեխայի ծնունդը երջանկություն է դիտվել: Տղա և աղջիկ երեխաների նկատմամբ աղձնիքցիների կանխակալ վերաբերմունքը արտացոլվել է նույնիսկ զանազան առած-ասացվածքների մեջ: Այսպես, աղջկա մասին սովորաբար ասվում էր. «Լավ վատ, խլղին պատ», «Ուրիշի ճրագ», «Իր տիրոջ աչքը լույս», «Աղջիկը խլղինն է, տղան՝ տիրունը, օջախինը» և այլն: Աղջիկը ոչ միայն շատ քիչ բան է ավելացնում գերդաստանական ունեցվածքին, այլև օժիտ տանելով պակասեցնում է այն⁶: Ընդհակառակն, արու զավակի տնտեսական օգտաշատ գործունեությունը կանխորոշվում էր ծննդյան իսկ օրից: Նա էր համարվում «Տան լուծ քաշողը», վար ու ցանք անողը, զենք կրողը: Եվ պատահական չէ, որ աղձնիքցիների շրջանում տարածված էր այն խոսքը, թե «Առանց աստված կմնաս, բայց առանց տղայի չես ապրի», քանզի «տղան տան ծուխն է»⁷: Որոշակի խտրականություն էր դրվում աղջիկ և տղա երեխաների միջև: Աղջրկա խնամատարությունը սկսած ծնունդից այն չէր, ինչ տղաներինը: Կար մըտայնություն, թե «աղջկա երեսը պինդ կլինի, նրան Լթե ջրաղացի քարի տակ էլ գցես, էլի ողջ դուրս կգա»⁸: Այդ պատճառով էլ նրան համարյա թե թողնում էին բախտի՝ քմահաճույթին: Բացի այն, որ աղջիկը ժառանգելու իրավունքից զուրկ էր, նաև նստելիս, ճաշելիս, քնելիս նախ բավարարվում էր տղա, ապա նոր միայն աղջիկ երեխայի պահանջները: Այդօրինակ վերաբերմունքը ծագում էր ծանր աշխատանքները ֆիզիկապես ուժեղ տղամարդու կողմից հաղթահարելու ունակ հանգամանքից, որովհետև նրա ձեռքում էին գտնվում տնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության, անասնապահության և արհեստների վարման դժվարին աշխատանքները: Կանայք հիմնականում զբաղված էին տնային տնտեսությամբ ու երկրագործական-անասնապահական մթերքների վերամշակմամբ:

Նշված աշխատանքների կազմակերպման ժամանակ հաշվի էր առնվում

⁵ Աբեղյան Մ., Երկիր, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966, էջ 454.

⁶ Նահապետյան Ռ., Գաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԳԱՆ), տ. 3, էջ 46, տ. 8, էջ 85:

⁷ ԳԱՆ, տ. 3, էջ 46—47: Նման առած-ասացվածքները լայն տարածում ունեին ողջ Հայաստանում: Այսպես. Սպահանում՝ «Աղջիկ ծնվելիս տան պատը ծակվում է», պոլսահայոց մեջ՝ «Աղջիկն օտարի ճրագ է» (Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960, էջ 65—67): Գանձակ զավատում աղջին «ուրիշի ապրանք», «դրսի պատ» էին համարում, այնիչ արու երեխան «տան սյունն է», «Երեխային նեցուկ է», «օջախը վատ պահող», «ծնողաց հիշատակը պահպանող», «նրանց գերեզմանը օրհնել տվող է» (Լալայան Ե., Գանձակի դավառ, Ազգագրական հանգես (այսուհետև՝ ԱՀ), գ. VI, Քիֆլիս, 1900, էջ 287):

⁸ «Մշակ», 1879, № 34:

սեռա-տարիքային հասակը: Ընդհանրապես, սեռերի միջև սահմանազատումը կատարվում էր երեխաների 7—8 տարեկան դառնալու շրջանում: Հենց այդ հասակից էլ նրանք իրենց ծնողների ձեռքի տակ աստիճանաբար ներգրավվում էին զանազան աշխատանքների մեջ: Հոր ձեռքի տակ աշխատող տղաները համարվում էին նրա օգնականները, իսկ մոր ձեռքի տակ աշխատող աղջիկները, որ հայտնի էին պսպոռ անունով՝ մոր օգնականները: 14—16 տարեկան պատանիներն արդեն ձեռք էին բերում աշխատանքային հասունություն:

Ընտանիքի տղամարդ անդամներից յուրաքանչյուրը տանուտիրոջ կողմից սովորաբար կարգվում էր մի որոշակի աշխատանք կատարելու: Հասունացող արու զավակին նախապես կողմնորոշում էին նրան վստահվող աշխատանքը՝ հովվություն, հոտադուրություն և այլն: Տան ներսի աշխատանքները տանդղինը բաժանում էր հարսների և աղջիկների միջև ըստ ավագություն կարգի: Առավել հարգի աշխատանքները, այն է՝ խմոր հունցել, հաց թխել, կաթնամթերքներ մշակել, կերակուր պատրաստել և այլն, հանձնարարվում էին ավագ հարսներին, հողագործական աշխատանքները (քաղհանում, մշակում), բնակարանը կարգի բերելը, ընտանիքի անդամների հագուստներին հետևելը, նրանց նկատմամբ ծառայություններ կատարելը կրտսեր հարսների գործն էր: Աղջիկները ջուր էին բերում և ըստ հարգի օգնում տան կանանց: Բոլոր կանայք մասնակցում էին թել մանելուն, հագուստներ կարելուն, ազանելիքներ և թիկնոցներ գործելուն, արիշտա կտրելուն և այլն: Ընդ որում, ջահել հարսներն ու աղջիկները տարվում էին ասեղնագործությունը՝ մանում էին բարակ թել նուրբ գործվածքների համար, իսկ կանայք դբաղվում էին կտավագործությունը՝ թեռ, թաղիք, կարպետ, գորգ, այծի մազից վրան (կոն), հագուստներ պատրաստելով: Վերջիններին ջահել աղջիկները պետք է հմտանային մինչև հարս գնալը: Պատանիները և մանկահասակ աղջիկները նույնպես ընդգրկվում էին համապատասխան աշխատանքների մեջ: Աշխատանքի սեռային բաժանումը չէր բացառում տղամարդկանց և կանանց փոխօգնությունը: Այսպես, օրինակ, Աղձնիքի դաշտային շրջաններում, ուր բնորոշը երկրագործությունն էր, կանայք օգնում էին վարուցանքով զբաղվող տղամարդկանց: Լեռնային մասերում, ուր բնորոշը անասնապահությունն էր, կանայք մեծապես օգնում էին անասնապահ տղամարդկանց: Բոլոր դեպքերում, բերքահավաքն ու կալսումը, սննդանյութերի վերամշակումը կատարվում էր տղամարդկանց և կանանց կուրեկտիվ աշխատանքով:

Երկրագործական և անասնապահական աշխատատար զբաղմունքները պահանջում էին մեծ թվով աշխատավորներ, հետևապես նաև նրանց միջև աշխատանքային ֆունկցիաների մասնագիտական բաժանում, որով գերդաստանում առաջանում էր տնտեսավարման համապատասխան մասնագիտություններ: Գերազանցապես երկրագործությամբ զբաղվող գերդաստանի տնտեսական հիմնական ֆունկցիաները կատարվում էին տղամարդկանց կողմից, իսկ կանայք հիմնականում սահմանափակվում էին տնային աշխատանքներում: Այս հանգամանքը նշանակալի շափով սահմանափակում էր կանանց տնտեսական ու իրավական դերը ընտանիքում:

Լեռնային շրջաններում տղամարդկանց և կանանց մի մասը կտրվում էր գերդաստանից և մանր ու խոշոր եղջերավոր անասունների հետ մեկնում ամառանոցները: Այստեղ ընտանիքի ավագ և ձեռներեց անդամները զբաղված էին տնտեսության կարևոր ճյուղով՝ ոռոգարաբուծությամբ, որոշ շրջաններում՝ նաև մեղվաբուծությամբ: Տան հմուտ ղեկավարը միաժամանակ ղեկավարում էր անասնապահների աշխատանքը: Նա էր որոշում սար բարձրանալու ժամանակը, վայրը, հսկում հովիվների աշխատանքը, անասնապահությունից և այլ զբաղմունքներից ստացված արդյունքների պահեմտավոր-

ման ու վաճառքի շափը, ստացված եկամուտների տնօրինումը, տղաների ուսուցումն ու դաստիարակությունը: Գերդաստանի տարեց նահապետին ամենուրեք, իբրև պատիվ, չէին թողնում մասնակցելու ծանր աշխատանքներին: Լեոնային շրջաններում, ի տարբերություն գերազանցապես դաշտավարությունը զբաղվող գերդաստանների, կանայք առավել շափով էին մասնակցում դաշտային աշխատանքներին: Աշխատանքով ծանրաբեռնվածությունը բարձրացնում էր լեոնեցի կնոջ հեղինակությունը:

Աղձնիքի դաշտային շրջանների կանանց իրավունքները լեոնային շրջանների կանանց համեմատ սահմանափակ էին: Շնորհիվ բնատուր տնտեսական հարաբերությունների որոշ պահպանվածություն, լեոնային շրջաններում կինը համեմատաբար ազատ էր մասնակցելու ընտանեկան և հասարակական բնույթի խորհուրդներին: Այդ երևույթը պայմանավորված էր նաև վերը նշված հանգամանքով, որ լեոնային շրջաններում տղամարդկանց հիմնական մասը տարվա զգալի ժամանակը կտրված էր ընտանիքից և կամա-ակամա կինն ստիպված էր լինում խառնվելու ընտանեկան, երբեմն նաև՝ հասարակական լուծում պահանջող հարցերին: Լեոնային շրջաններում կանանց ընտանեկան և հասարակական ակտիվությունը պայմանավորված էր նաև ռազմա-քաղաքական հանգամանքներով. կինը տղամարդկանց ուժերը համալրելու նպատակով, ակտիվորեն ներգրավվում էր քրդական ու թուրքական հարձակումներից և կողոպուտներից ինքնապաշտպանությունն ապահովելու գործին:

Գերդաստանում ամեն մի անդամ, նայած նրա սեռին և տարիքին ու դրան համապատասխան՝ տնտեսության մեջ ունեցած դերին, ուներ որոշակի իրավունքներ:

Գերդաստանի ղեկավարը («տան խոտոզ», «սպիտակ մորուք», «տանուտեր», «տան մեծ», «տան ղեկոզ») ավագ տղամարդն էր: Նրա ձեռքում էր կենտրոնացված ընտանիքի բյուջեն, նա ինքնակամ կերպով կարող էր տնօրինել ինչպես գերդաստանական ողջ սեփականությունն ու ունեցվածքը, այնպես էլ ընտանիքի անդամների ճակատագիրը: Գերդաստանի ներքին կյանքն ու տնտեսական գործունեությունը կազմակերպվում էր տան ղեկավարի կողմից, նա օժտված էր անսահմանափակ իրավունքներով և իշխանությամբ: Գերդաստանի բոլոր անդամները պարտավոր էին իրենց ամեն մի արարքի համար նրան մանրամասն հաշիվ տալ, բայց իրենից ոչ ոք հաշիվ չէր պահանջում: Տանուտերը տունը գլխավորում էր սովորաբար մինչև մահ: Միայն բացառիկ դեպքերում նրան կենդանության օրոք փոխարինում էր մեկ ուրիշը (ավագ որդին կամ ամենաձեռներեցը): Երբ ծերացած տանուտերը տան ղեկը տալիս էր բանիմաց որդուն, ինքը դառնում էր նրա խորհրդատուն: Սա իր ձեռքում էր պահում համայնքում ընտանիքի շահերը պաշտպանելու իրավունքը: Նահապետական կարգ ու կանոնը պահպանած գերդաստաններում ներքին կյանքին վերաբերող առավել կարևոր հարցերը նա վճռում էր տարեց տղամարդկանց հետ խորհրդի նստելով, իսկ կապիտալիստական հարաբերությունները մուտք գործած ընտանիքներում, ուր զորեղանում էին կենտրոնախույս ուժերը, մեծանում էր նրա ղեկավարությունը:

Գերդաստանում ամենամեծ հեղինակություն ունեցողը տանուտերն էր: Երբ նա ներս էր մտնում, տանը գտնվող բոլոր անդամները ոտքի էին ելնում և խոնարհաբար գլուխ տալիս: Կանայք այդ ժամանակ անցնում էին տան իրենց հարկաբաժինը: Տանուտերը տղամարդկանց հետ նստում էր օդայում, իսկ այդպիսին շունեցողները՝ գլխատան կենտրոնում գտնվող կրակարանի մոտ (թոնիր կամ թվեք): Ճաշելիս բազմում էր ճաշասեղանի ամենապատվա-

վոր տեղում⁹։ Ամեն ինչից առաջինը բաժին էր հանվում նրան¹⁰։ Նրա խոսքն օրենք էր բոլորի համար։ Միաժամանակ նահապետն աշխատում էր իր խըստությամբ դժգոհություն շառաջացնել գերդաստանում, սիրալիր մոտեցում ունենր կանանց, հարսների, աղջիկների նկատմամբ, որով շահում էր բոլորի համակրանքը։ Նրա նկատմամբ խոր հարգանք էր ցուցաբերվում ոչ միայն գերդաստանի, այլև համայնքի ողջ անդամների կողմից։ Ամենուրեք նրան դիմում էին պատվանուններով։ Գերդաստանի մյուս տարեց անդամների (կին թև տղամարդ) նկատմամբ նույնպես վարվում էին հարգալից ու հոգատար։ Ընթացիկները նահապետին համարում էին սիմվոլիկ էակ, ուստի և պատահական չէր, որ ասում էին. «Տանը մեծ շիինելու դեպքում մեծ քար մը դիր նրա տեղը» կամ «քոթուկ մը դիր նրա տեղը»¹¹։ «Երբ տան մեծ հայրը բացակա ըլլա, մեծ փեթակին հարցուք»¹² և այլն, որը արդեն հանգեցնում էր նախնու պաշտամունքին։ Ասում էին, թև «Ով մեծին չի հարգում, նա աստծուն էլ չի ճանաչում»¹³։

Իրավունքներով, դիրքով ու հեղինակությամբ երկրորդ դեմքը գերդաստանում տանդագինն էր, որը նահապետի հավատարիմ օգնականն ու ընտանիքում նբա բարձր հեղինակություներն ապահովողն էր։ Վերջինս կարգավորում էր տնային տնտեսությունը, հետևում հարսների ու աղջիկների պարտականությունների կատարմանը։ Հզոր բնավորության տեր տանտիկինը ամուսնու մահվան դեպքում շարունակում էր ղեկավարել, օգնական ունենալով ավագ որդուն, մի երեւոյթ, որը մասնավորապես լեոնային գավառներում իր մեջ պահում էր մայրական իրավունքի երբեմնի նորմերի վերապրուկները, թեև գերդաստանում տիրողը հայրիրավական հարաբերություններն էին։ Կինն այստեղ սեփականատեր չէր համարվում։ Զրկված լինելով արտադրության միջոցների հանդէպ սեփականատիրական իրավունքից, կինը զորու չէր ընտանեկան կարևոր հարցերի լուծման գործում։ Ընտանեկան խորհուրդներին կարող էր մասնակցել միայն «տանդագինը», այն էլ նահապետի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում։ Տանտիկնոջ իշխանությունը թեև տարածվում էր միայն իգական սեռի և երեխաների վրա, այնուամենայնիվ նա հարգվում էր բոլորի կողմից, քանզի գերդաստանի ներքին միասնության ու անդորրի ապահովողն ու պահպանողն էր, ընտանիքի անդամների վրա նահապետի իշխանության տարածողը։ Հարսներն իրենց պահանջներն ու բողոքները նրան էին հայտնում։ Նա էր իգական սեռի և երեխաների դաստիարակը և աշխատանքի փորձառու կազմակերպիչը, բարոյական ամբողջ կանոնների ուսուցիչը։ Խրատում էր հարսներին բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները, բարձր պահել օջախի անունն ու հեղինակությունը, բարոյական պատիվը, չկանխել սերնդաճը։ Տանտիկնոջ ջանքն էր հարսներին դաստիարակել տան և ազգի սովորույթներով, միմյանց նկատմամբ համերաշխության հատկություններով։ Նա հարսներին դաստիարակում էր նաև դաստիարակ դարձնելու համար, որպեսզի «իրենցից եղածն էլ մի բան սովորի»¹⁴։ Նա միաժամանակ գերդաստանի հացավորողն էր։ Նրա ձեռքում էին կենտրոնացված սննդամթերքների մատանների բանալիները։ Ուներ տնային ապրանքների փոխանակման, մանր կարիքների համար վաճառելու և գնելու իրավունք։ Հոգում էր տան անդամների հագուստի և այլ կարիքների մասին, և

⁹ ԴԱՆ, տ. 4, էջ 132, տ. 9, էջ 30։

¹⁰ ԴԱՆ, տ. 4, էջ 45։

¹¹ ԴԱՆ, տ. 4, էջ 35, տ. 3, էջ 43։

¹² ԴԱՆ, տ. 3, էջ 44։

¹³ ԴԱՆ, տ. 3, էջ 66, տ. 4, էջ 35, 46, 132։

¹⁴ ԴԱՆ, տ. 2, էջ 140—141, տ. 3, էջ 37—39, տ. 9, էջ 30։

դրամն էլ երբեմն նահապետի հանձնարարութեամբ պահւում էր նրա մոտ¹⁵։

Տանտիրոջից և նրա կնոջից հետո առավել հարգանք վայելողը տան ավագ որդին էր՝ իր կնոջով հանդերձ։ Այսպիսով, Աղձնիքում, ինչպես և ողջ Հայաստանում, գերդաստանի յուրաքանչյուր անդամի իրավական դրութիւնը որոշվում էր նրա սեփականատիրական գույքային իրավունքներով և տընտեսական ֆունկցիաներով։ Ստեղծված նման իրավական կարգը խստորեն պահպանվում և փոխանցվում էր սերնդից սերունդ՝ կարգավորելով բազմանդամ գերդաստանական տան առանձին անդամների վարքը ընտանեկան կենցաղում։

Ներընտանեկան կյանքի մի ուրույն ոլորտ էլ կազմում են ամուսնա-ընտանեկան սահմանափակումներն ու արգելքները։ Ամուսնութեան գործարքի ամենասկզբնական փուլից՝ աղջիկտեսից սկսած մանկամարդ աղջկա վարքագիծը կտրուկ կերպով փոխվում էր։ Նրան այլևս արգելվում էր խաղալ հասակակիցների հետ, հաճախակի երևալ հասարակութեան մեջ։ Արդեն նշանած աղջիկն օրվա մեծ մասն անց էր կացնում կանանց ու իր դիրքի աղջիկների ու հարսների շրջապատում։ Նշանդրեքի ողջ ծիսակարգի ընթացքում աղջիկը մարդկանց մեջ էր դուրս գալիս տարեց անձանց ցանկութեամբ ու պահանջով, և այդ դեպքում էլ ներկայանում էր հուշիկ ու անձայն, ջանալով ըստ ամենայնի պարկեշտ, հեզ ու խոնարհ երևալ ապագա ամուսնուն ու նրա հարագատներին։

Եթե մինչև հարսանիքը հարսնացուն մարդկանց երևում էր բաց երեսով և դեմքը թաքցնելու միակ միջոցը գլուխը խոնարհելն էր, ապա հարսանիքի առթիվ զգեստավորվելու պահից նրա դեմքը ծածկվում էր քողով¹⁶։ Աղձնիքի տարբեր շրջաններում ամուսնական քողը կրում էին մինչև 7 տարի։ Քողի առկայութեանը երբեմն հնարավորութիւն չէր տալիս կնոջը դեմքով ճանաչելու մարդկանց։ Երեսը վարագործող ամուսնական քողը հարսն իր ձեռքով բարձրացնում ու բացում էր միայն Լրեխանների ներկայութեամբ՝ խոսելիս կամ ուտելիս։ Նա իր դեմքը ցույց չէր տալիս տան մեծին, տանտիրոջը, իր Լնից տարիքով մեծ բոլոր տեղերին ու ավագ տեղերին, օտարական տղամարդ ու կին հյուրերին, համագյուղացիներին¹⁷։ Ամոթալի ու անպատվաբեր էր համարվում հարսին հերարձակ, ինչպես նաև ոտնութաթն ու կրքունկը բաց տեսնելը։ Հարսի կողմից անհանդուրժելի արարք էր համարվում նստել ավագների ներկայութեամբ։ մնալ տղամարդկանց ու տարեց կանանց շրջապատում, նայել նրանց դեմքին, կերակրել երեխային ուրիշների ներկայութեամբ և առանց սկեսրոջ հրամանի և այլն¹⁸։

Հատկապես լայն տարածում ունեւր հարսի շխտականութիւնը։ Այն համարվում էր հարգալից վերաբերմունք բոլոր նրանց հանդեպ, ում հետ նա չէր խոսում։ Չխտականութիւնը համեմատվում էր խփով պուտուկի հետ. եթե խուփը պահպանում է կերակրի համն ու բուրմունքը, շխտականութիւնն էլ հարսի անմեղութիւնն ու համեստութիւնը¹⁹։ Հարսն ամենից երկար շխտական էր մնում կեսրարի և քավորի հետ. այն տևում էր մինչև 3—4 երեխա ունենալը, իսկ երբեմն էլ՝ մինչև մահ²⁰։ Տեղերի հետ չէր խոսում մինչև 2—3 երեխա ունենալը²¹։ Սկեսրոջ հետ համեմատաբար շուտ էր խոսում, սովորա-

¹⁵ ԴԱՆ, տ. 9, էջ 25—26։

¹⁶ ԴԱՆ, տ. 4, էջ 110—111։ Քողն Աղձնիքում հայտնի էր քողք, քողկած, շարշուր, յազմա անուններով։

¹⁷ ԴԱՆ, տ. 3, էջ 38—39, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 40—41, 129—130, տ. 13, էջ 37։

¹⁸ ԴԱՆ, տ. 2, էջ 208, տ. 9, էջ 40—41։

¹⁹ ԴԱՆ, տ. 1, էջ 14, տ. 2, էջ 207, տ. 4, էջ 14—15։

²⁰ ԴԱՆ, տ. 2, էջ 207, տ. 4, էջ 35։

²¹ ԴԱՆ, տ. 1, էջ 84, տ. 4, էջ 40։

բար առաջին Լերիսան ունենալուց հետո²², Բացարձակ շխտականության շրջանում նա ընտանիքի անդամների հետ հաղորդակցվում էր ժեստերի լեզվով կամ դեռահաս Լերիսաների օգնությամբ²³: Նորահարսի ամոթխած այդ շրջանը տևում էր մինչև 2—3 Լերիսա ունենալը: Չխտականությանը սովորաբար վերջ էր դրվում, երբ հարսն արդեն բազմազավակ մայր ու հասուն որդիների տեր էր դառնում: Խոսելու առաջարկով դիմում էր տան ավագը, խոստանալով նրան որևէ նվեր, կամ ասելով. «Այս տանն ամեն ինչ քոնն է, խոսիր»²⁴: Սակայն խոսելու վերաբերյալ պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո էլ կանայք երկար ժամանակ ցածրախոս էին լինում և խուսափում էին անմիջական հաղորդակցումից:

Ինչպես հայտնի է, շխտականությունը մեզ է հասել հայրիրավական ընտանիքից՝ երկու սեռերի փոխհարաբերությունները կարգավորելու միտումով: Կինը հազարամյակների ընթացքում հարկադրաբար ձեռք էր բերել խուսափելուն նպաստող մի շարք հարակից ձևեր: Այդպիսիք էին՝ բարդ գլխակապերը, դիմակավորման հասնող քթկալակապությունը, քողավորումը, թանձր ու երկար զգեստներով իր մարմնական բարեմասնությունները քողարկելը և այլն: Չխտականությունը և նրա այս հարակիցները սովետական ազգագրության մեջ այժմ քննվող, բայց դեռևս վերջնական լուծում չստացած պրոբլեմն է: Հայրենական գիտության մեջ այդ հետաքրքիր պրոբլեմի հետազոտմանը շափազանց մեծ նշանակություն և կարևորություն է տրվել: Վերջին երկու տասնամյակում սովորությունների այդ համակարգը մեծ հետաքրքրություն է հարուցել ուսումնասիրողների շրջանում: Կինը մինչև բազմազավակ մայր դառնալը կաշկանդված էր, որից հետո նա ազատ էր դառնում և վայելում գերդաստանի ազատ հարաբերությունները: Երիտասարդ կանանց մասին սովորաբար ասվում էր. «կնիկը կոտրուկ ազգ է»²⁵, «կնիկմարթ ձեռաշոր է»²⁶, «կնիկմարթ պետք է փակ լինի, իրավունք չունի օտար կամ դրացի մարդու թև ընկնի», «Ամուսինը կնոջ թագավորն է»²⁷, «Տղամարդ որ կա՝ գլուխ է, կնիկ որ կա՝ ոտ է» և այլն²⁸: Կինը ենթակա էր ճնշման սկեսորոջ, ավագ տեգերկանանց և իր ամուսնու կողմից: Նրա կամքը տնօրինում էր սկեսորը, այս կամ այն թերացումը կամ սխալ արարքը հայտնում էր իր որդուն, իսկ ամուսնու խրատելու միջոցը ծեծն էր: Կնոջը անհավատարմության մեջ կասկածելիս, դատաստանը թողնվում էր նրա եղբորը: Կինը խոսքի մեջ անազատ էր²⁹: Ընդհանրապես մեծ տարբերություններ կային մոր և կնոջ նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքի մեջ: Մորն անսահման սիրում ու հարգում էին, հավատում ու լսում նրա յուրաքանչյուր խոսքը: Պատահական չէր ասվում, թե «Մոր սուտը կանցնի, բայց կնոջ ճիշտը չի անցնի»³⁰: Մայրը սնող և մեծացնողն էր և սրբություն էր որդու համար, իսկ կինը օտարի աղջիկ էր, մոր խոսքը բոլորի համար ընդունելի էր «հալած յուղի նման»³¹:

Ընտանիքում և հասարակության մեջ առանձնապես պատիվ չունեիր ամուլ կինը: Նրան նայում էին իբրև անպտուղ ծառի, չուր կոճի: Տղամարդկանց հավասար ծանր ու դժվարին աշխատանքներ կատարելու համար այդպիսին

²² ԴԱՆ, տ. 3, էջ 51—52, տ. 8, էջ 88, տ. 9, էջ 41:

²³ ԴԱՆ, տ. 1, էջ 84:

²⁴ ԴԱՆ, տ. 1, էջ 14:

²⁵ ԴԱՆ, տ. 4, էջ 37:

²⁶ ԴԱՆ, տ. 3, էջ 47:

²⁷ ԴԱՆ, տ. 4, էջ 107, տ. 9, էջ 33:

²⁸ Նույն տեղում:

²⁹ ԴԱՆ, տ. 3, էջ 38—39, տ. 4, էջ 104, տ. 9, էջ 33:

³⁰ ԴԱՆ, տ. 9, էջ 33:

³¹ ԴԱՆ, տ. 3, էջ 38—39, տ. 4, էջ 37, 106, տ. 8, էջ 86, տ. 9, էջ 30:

ընտանիքում միաժամանակ արժանանում էր կարեկցանքի ու խղճահարու-
 թյան: Մինչդեռ որքան շատ արու զավակների տեր լիներ կինը, այնքան նա
 կշիռ և իրավասութուն էր ստանում ընտանիքում և հասարակության մեջ.
 «Սա տասը տղամարդու մայր եմ»,— լսվում էր շատ անգամ նրանից³²: Բազ-
 մազավակ այդպիսի կանանց զլխաշորը դիտվում էր իբրև սրբութուն, հա-
 մարվում տվյալ ընտանիքի պատիվը: Նրանով հաճախ հաշտեցնում էին եր-
 կու թշնամի կովող կողմերին³³: Այդ կանանց խոսքը խրախուսում, սխրագոր-
 ծոթյան էր մղում տղամարդկանց. «Գընգա խոսքը կետին շընգնը», այսինքն՝
 կնոջ խոսքը անհետևանք չեն թողնի:

Ընտանեկան լիփկետի մեջ առանձնանում են նաև ծնողների ու երեխա-
 ների և ամուսնական զույգերի միջև գոյություն ունեցած որոշակի սահմանա-
 փակումները: Ըստ այդ նորմերի, ծնողները փաստորեն զրկված էին իրենց
 զավակներին սիրելու և գուրգուրելու իրավունքից: Զափազանց մեծ վիրավո-
 լանք ու անարգանք էր համարվում մեծերի կամ օտար մարդկանց ներկա-
 յությամբ զրկել, շոյել կամ համբուրել երեխային³⁴: Երբ հայրը երեխային
 զիրկն առած նստած էր և այդ պահին ներս էր մտնում տան մեծը, նա իրեն
 զգում էր հանցանքի մեջ բռնվածի դերում³⁵: Բարոյա-դաստիարակչական տև-
 օակետից գերդաստանի տղամարդիկ խուսափում էին իրենց կանանց հետ
 ցերեկը տան մեջ առանձնանալուց: Այս սովորույթը, անշուշտ նպատակ ունի
 նաև կանխել իրենց անհատական, փոքր ընտանիքների վերաբերյալ պլաննե-
 րի կազմումը կամ գերդաստանը ենթարկել բաժանքի:

Ընտանիքի տարբեր անդամների միջև հարաբերությունները պայմանա-
 վորված էին գոյություն ունեցող ավանդական նորմերով: Այդ սովորույթի
 համաձայն տաբույցված էին գերդաստանի տարեց անդամների, ամուսին-
 ների անվանումները³⁶: Հարգի էր կնոջը ոչ թե անձնանունով, այլ նրա ծննդա-
 վայրի կամ ծնողների անունով դիմելը (Գալհուցու աղջիկ, Ստեփոյի աղջիկ)³⁷:
 Հարսները սովորաբար իրենց ամուսիններին մինչև երեխա ունենալը դիմում
 էին նրանց փոքր եղբոր՝ ասենք՝ Սարգսի ախպեր, այդպիսին շլինելու դեպ-
 քում՝ եղբոր որդու՝ Գևորգի ապո, իսկ երեխա ունենալուց հետո՝ իրենց փոքր
 որդու՝ Գագոյի հեր ձևերով: Հասակավոր կանայք էլ իրենց ամուսիններին
 դիմում էին «տո, մարք, այ մարք» ձևով³⁸: Գերդաստանում իրար դիմելիս
 գրեթե բոլորն էլ խուսափում էին արտասանել անունները՝ նրանց կյանքը հո-
 գևոր պաշտպանության տակ դնելու նպատակով: Ծնողները երեխաներին դի-
 մում էին տղա լաօ, աղջի լաօ, երեխաները ծնողներին՝ բաբ, մամ, դայե, նա-
 նե, իսկ պապին ու տատին՝ ջոբո, ջոջո ձևով³⁹: Տեղերն ու տեղերկանայք
 մեկմեկու դիմում էին երեխաների անունների միջնորդումով (Դավթի բաբ,
 Գորքեի մամ)⁴⁰:

Ինչ-որ շափով արգելք ենք նկատում ճաշելու ժամանակ գերդաստանի
 անդամներին ըստ սեռի ու տարիքի խմբերի բաժանելու երևույթի մեջ: Այդ-
 պես, օրինակ, տղամարդիկ սեղան էին նստում առանձին, կանայք՝ առանձին:

³² «Մշակ», 1879, 34:

³³ Կովի պահին, Լթե կանայք իրենց զլխաշորերը փռին նրանց ճանապարհին, ապա այն
 տրորելը սրբապղծութուն էր համարվում և կովին վերջ էր տրվում (ԴԱՆ, տ. 4, էջ 106—
 107, Կարապետյան Ս., Սասուն, Երևան, 1963, էջ 59):

³⁴ ԴԱՆ, տ. 3, էջ 48, տ. 9, էջ 34:

³⁵ ԴԱՆ, տ. 4, էջ 38, 108:

³⁶ ԴԱՆ, տ. 4, էջ 38, ԴԱՆ, տ. 8, էջ 96:

³⁷ ԴԱՆ, տ. 3, էջ 58—59:

³⁸ ԴԱՆ, տ. 4, էջ 25, տ. 8, էջ 96:

³⁹ ԴԱՆ, տ. 3, էջ 59:

⁴⁰ ԴԱՆ, տ. 3, էջ 59, տ. 9, էջ 82:

նստում էին ճաշի ավագության կարգով, ծալապատիկ, թաղիքների վրա: Սև-դանի փոխարեն փոռցն էր, որի վրա գցվում էր հացջուր: Հասակավոր մարդկանց կողքերին և թիկունքին հենվելու համար դրվում էին բարձեր: Տղամարդիկ ճաշի էին նստում գլխատան մեջ թոնրի կամ թվեթի շուրջը, կամ օդայում, որից հետո կանայք՝ գլխատան վերին մասում, գլուխները խոնարհած, առանձնապես ջահել հարսները՝ աննկատ մնալու համար: Նորահարսը մինչև երեխա ունենալը ճաշում էր ջահել աղջիկների հետ, առանձին խումբ կազմելով: Փոքրահասակ տարիքի երեխաները ճաշի էին նստում մայրերի հետ, իսկ աշխատանքի ընդունակ պատանիները տղամարդկանց հետ: Տղամարդիկ և կանայք նստում էին սեղանի շուրջը բոլորած: Նախ ճաշում էին տղամարդիկ, հետո կանայք երեխաների հետ, այնուհետև երիտասարդ հարսներն ու աղջիկները: Մատուցողները երիտասարդ հարսներն ու աղջիկներն էին, հյուրեր հայտնվելիս՝ մատուցողները դառնում էին ջահել տղաները:

Հակառակ այս ամենի, փոքր ընտանիքում կար ճաշելու երկու կարգ. 1. առավել դեմոկրատացած ընտանիքում միևնույն սեղանի շուրջն էին նստում տան բոլոր անդամները, 2. գերդաստանական հարաբերությունները պահպանած ընտանիքներում ճաշում էին տղամարդիկ առանձին և կանայք, հարսներն ու երեխաները համատեղ⁴¹:

Ամուսնա-ընտանեկան վերոհիշյալ սահմանափակումների ու արգելքների գիտական ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ոչ միայն վեր հանել ամուսնության և ընտանիքի ձևերի, ներընտանեկան փոխհարաբերությունների վաղնջագույն փուլերն ու պատմական զարգացման մեջ դրանց կրած փոփոխությունները, այլև մեծապես նպաստում է նոր ժամանակներում համանման երևույթների կենցաղավարման և գոյատևման պատճառների բացահայտմանը, դրանց ըստ ամենայնի գնահատմանը: Իսկ դա նշանակում է, որ այդ խնդիրը բնի ոչ միայն գիտա-ճանաչողական, այլ նաև գործնական կարևոր նշանակություն: Մեր երկրի տարբեր էթնիկ ընդհանրությունների մշակութային ժառանգության մեջ վերապրուկային այլազան երևույթների շարքում խիստ անհրաժեշտ է բացահայտել ու տարբերակել ինչպես ուսանելի, օգտակար, այնպես էլ վնասակար, նոր սոցիալիստական հարաբերությունների հետ անհամատեղելի սովորույթներն ու վարքագծի նորմերը:

Р. А. НАГАПЕТЯН—Несколько вопросов традиционных внутрисемейных отношений и поведения у ахдзникских армян. — На основании сравнительного анализа материалов письменных исторических источников и, главным образом, этнографических сведений, собранных среди ахдзникских армян, проживающих в различных районах Советской Армении, восстанавливается система внутрисемейных отношений, порядок главенства, разделения труда между членами семьи по возрасту и полу.

⁴¹ ԴԱՆ, տ. 9, էջ 34—36: